— Ցանուն Արաբկերցի Կարապետի Գրիգորեան վասն նուիրաբերելոյ զվեց (6) եգիպտական ոսկի յօգուտ Մ. Աթոռոյ։ Թ. 206.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն տրապիզոնցի, վերաբնակելոյն յԵկատերինոդար քաղաքի, Աւետսի Մեղրիկեան, վասն նուիրաբերելոյ մի հարիւր ռուբլի յօգուտ Մ. Աթոռոյ։ Թ. 209.

— Ցանուն Գանձակեցի Պօղոսի Մահտեսի Քերովբեան Տ. Մարտիրոսեանց վասն նուիրաբերելոյ մի հազար ռուբլի ի յիշատակ հանգ. հօրն Քերովբայ։ Թ. 210.

— Ցանուն հայ հասարակութեան Սարիղամիշ աւանի՝ վասն նուիրաբերելոյ երկերիւր եօթանասուն ռուբլի յօգուտ Մ. Աթոռոյ։ Թ. 214.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Սինոդը փետրվարի 22-ին ստանալով կառավարչապետի գիւանից գրութիւն Կողբում հայոց նոր եկեղեցի շինելու թոյլտուութեան մասին, մարտի 4-ին որոշեց վերադարձնել Երևանի Կոնսիստորիային եկեղեցու հաստատուած յատակագիծը և հրամայեց հարկաւոր կարգադրութիւններ անել շինութեան մասին։

Մարտի 9-ին Սինոդը լսեց Գանձակի պ. Նահանգապետի գրութիւնը Շուշուայ Ագուլեաց եկեղեցու ծխականների համախոհականի տակ եղած ստորագրութիւնների իսկութեան մասին, նաև առաջնորդի կարծիքը և բողոքող երկու քահանաների ցուցումն, որ իրենք չեն ստորագրել Կոնսիստորիայի ծառայողների դէմ այդ առթիւ տուած բողոքը, հրամայեց թոյլ տալ Մանաս գիւղի քահանայ Տէր Արսէն Հախումեանցին մնալ Շուշի և շա-

բունակել քահանայագործութիւնը Ագուլեաց եկեղեցում, որի մասին և հրամանագրեց Ղարաբաղի Կոնսիստորիային։

Մարտի 11-ին Սինոդը կրկին մերժեց Ղարաբաղի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Կարապետ Տէր Եսայեանին Դաշալթի գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու մասին, որը մերժել էր անցեալ դեկտեմբերի 29-ին կայացրած օրագրով։

Մարտի 11-ին Սինոդը քահանայութեան արժանի դատաւ Զանգեզուրի գաւառի Կաւարտ գիւղի բնակիչ Դաւիթ Տէր Աւագեան Տէր Ազարեանցին և որոշեց դիմել Գանձակի պ. Նահանգապետին օրինական համաձայնութեան համար՝ ընծայացուին Կաւարտ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց կրկին դիմել Բաքուի տէր Նահանգապետին Սալեանի եկեղեցու շինութեան թոյլատրութեան համար, որի գործը սկսուած է 1896 թ. և դիմումն է եղել 1897 թուի յունվարի 18-ին և 1899 թուի յունիսի 20-ին։

Մարտի 14-ին Սինոդը, լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի զեկուցումն, քահանայութեան արժանի դատաւ Գրիգոր Դասպարեանցին Ջիւանշիրի գաւառի Հոռաթաղ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու և որոշեց դիմել Գանձակի պ. Նահանգապետին օրինական հաճութեան համար։

Նոյն թուին Սինոդը լսեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի զեկուցումը, որով վերջինս յայտնում էր, որ Վեհափառ Հայրապետն 1899 թուի յունիսին տուած № 797 կոնդակով թոյլատրած է հինգերորդ աստիճանի խնամութեան և նոյն թուի դեկտեմբերի 17-ին № 1418 կոնդակաւ ազգակցական եօթներորդ աստիճանի պսակները, այն ինչ Սինոդը Կոնսիստորեաներին իրաւունք է տուել թոյլատրելու խնամէական հինգերորդ աստիճանի

պատկներ, իսկ ազգակցական եօթներորդ աստիճանի պատկների առթիւ անտեղի և աւելորդ գրագրութիւն է տեղի ունենում։ Սինոդի հետ։ Կոնսիստորիան հայցում էր արտօնել, որ ազգակցական եօթներորդ աստիճանի պատկներ թոյլատրելու իրաւունքներ տրուի Կոնսիստորիաներին և վերջ դրուի անտեղի և աւելորդ գրագրութիւններին։ Սինոդը որոշեց դիմել Վեհափառ Հայրապետին, որ իրաւունք տայ Կոնսիստորիաներին այդպիսի պատկների թոյլտուութեան և այդպիսով վերջ տրուի աւելորդ գրագրութիւններին։

Մարտի 16-ին Սինոդը լուծեց Թիֆլիզի գաւառի Անտոկի գիւղի բնակիչ Ալէքսի Զալեանցի և Կատարինէ Ղազարեանցի պատկը և իրաւունք տուաւ Ալէքսիին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Գրիգոր Տէր Գէորգեան Տէր Յակոբեանցին և ձեռնադրել նրան քահանայ Ազօխ գեղջ։

Մարտի 18-ին Սինոդը լուծեց Աղաւնատուն գիւղի բնակիչ Սահակ Մնացականեանի և Վառվառէ Մելքոնեանի պատկը և թոյլ տուաւ Վառվառէին նորէն ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Վրաստանի և Իմերէթի հայոց Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Թիֆլիզի բնակիչ Կոնեան Ասլամազեանցին Խաչ և դիմել Թելէթ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու և դիմել արքունի պալատ ընծայացուին հարկատուութիւնից ազատելու համար։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուաւ Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Մկրտիչ Կիրակոսեան Տէր Աւետիսեանին և ձեռնադրել քահանայ Կարսի նահանգի Գեադուկ Սաթլմիշ գիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուաւ Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Յովհան Յովակիմեան Ղահրամանեանցին և տալ չորրորդ աստիճան Շուշի քաղաքի սուրբ Յովհաննէս եկեղեցուն սպասաւորելու։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Համբարձում Գրիգորեան Աղանեանցին և ձեռնադրել նրան քահանայ Զանգեզուրի գաւառի Հարար գիւղի վրայ։